

**ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2021 թվականի
փետրվարի 16-ին կայացած Գիտական Խորհրդի N 7 նիստի**

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 35-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում

/զեկ.Ս.Ս.Քելյան/

**2. 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների
կատարման ընթացքը ֆակուլտետում**

/զեկ.Վ.Պ.Վարդանյան/

3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ֆակուլտետում

զեկ. ամբ.վարիչներ/

**4. «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության» ամբիոնի վարիչի հաշվետվությունն ամբիոնում
կատարված աշխատանքների վերբերյալ**

/զեկ.Վ.Վ.Գրիգորյան/

5. Դոցենտի կոչման շնորհում

6. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը **2021/2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների** վերաբերյալ: Նախքան տվյալներ ներկայացնելը Քելյանը նշեց, որ ուսանողների ճնշող մեծամասնությունը կողմ է լսարանային՝ offline, ուսուցմանը: Նա մանրամասնորեն ներկայացրեց ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների գծով լուծարքային շրջան տեղափոխված ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների և ընդհանուր առմամբ 194 ուսանող կմասնակցեն վերջինիս: Քննաշրջանի ընթացքում եղել են տեխնիկական խնդիրներ, որոնք արագ լուծվել են և չեն խանգարել քննությունների ընթացքին:

Հաղորդման վերջում Քելյանը կոչ արեց դասախոսներին, անկախ դասընթացների լսարանային անցկացման ձևից, Moodle հարթակն օգտագործել նյութեր տեղադրելու և ուսանողներին հավելյալ հանձնարարություն տեղադրելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դեկան Մ.Գրիգորյանն ցավով նշեց, որ այսօր խոսել ուսուցման բարձր որակից պարզապես զավեշտ է: Նշեց նաև, որ շատ են մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա առարկաներից դժգոհող ուսանողները և այն ուսանողներն են, ովքեր նշված առարկաներից ի սկզբանե ցածր գիտելիքներ ունեն: Նշված առարկաներից արձանագրված բացասական միավորները խոսում են ուսանողների կողմից հարակից առարկաները սովորելու ցանկության իսպառ բացակայության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների կատարման վերաբերյալ: Մասնավորապես նշվեց, որ Ֆակուլտետում դասախոսների կողմից աշխատանքային բեռնվածությունը լիովին կատարված է: Դասապրոցեսի ընթացքում վերահսկողությունն իրականացվել է թե՛ ռեկտորատի և թե՛ դեկանատի կողմից: Խոսքի ավարտին Վ.Վարդանյանը նշեց, որ դասընթացների թերակատարման դեպքեր չեն գրանցվել:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՄԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ.վարիչ պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ դոց.Պ.Գ.Դավթյանի, Սերվիսի ամբ.վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Երկրաֆիզիկայի ամբ.վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը **ավարտական աշխատանքների** և

մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ թեմաները բաշխված են, չկա որևէ ուսանող ով անտեղյակ է իր թեմայից և բոլոր ուսանողները կապի մեջ են իրենց ղեկավարների հետ: Իրենց ելույթներում դոց.դոց.Ս.Սուվարյանը և Շ.Խաչատրյանը նշեցին, որ ունեն պատերազմում վիրավորում ստացած և կազդուրվող ուսանողներ, ում հետ աշխատանքներն ու խորհրդատվությունն իրականացվում են առցանց:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Մ.Ա.Գրիգորյանը հորդորեց ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի ղեկավարներին հնարավորության դեպքում անձամբ մասնակցել ռազմական գործողություններին մասնակցած ուսանողների աշխատանքի կազմելուն: Գրիգորյանը նշեց նաև, որ բոլոր ավարտական աշխատանքների պաշտպանությունը կայանալու է offline՝ հեռավար չի լինելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

4. ԼՍԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Վ.Գրիգորյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա ներկայացրեց մեկ տարվա ընթացքում ամբիոնում կատարված առարկայական ծրագրերում կատարված բարեփոխումները, ուսումնական և արտադրական պրակտիկայի ծրագրերում կատարված փոփոխությունները ինչպես նաև հաշվետու տարում հաստատվեց Տարածաշրջանագիտություն մասնագիտացումը: Վ.Գրիգորյանը նշեց, որ համավարակի հետ պայմանավորված հանրապետական օլիմպիադա չի կազմակերպվել, սակայն ամբիոնը մասնակցել է մարզային օլիմպիադաների կազմակերպմանն ու անցկացմանը: Վ.Գրիգորյանը հաշվետվության մեջ ներկայացրեց նաև ամբիոնի գիտական պոտենցիալը և ամբիոնի կողմից հրատարակված գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների թիվը: Խոսեց նաև ուսանողների արտասահմանյան պրակտիկաների առցանց կազմակերպման վերաբերյալ ինչպես նաև ամբիոնի կողմից կազմակերպվող անվճար դասընթացների մասին (Հաշվետվությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դոց.Ա.Հ.Պոտոսյանը, պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը, դոց.Ա.Թ.Գրիգորյանը, դոց.Մ.Ա.Գրիգորյանը նշեցին, որ Վ.Գրիգորյանի վարած ղեկավարումը ցույց տվեց, որ նա ունի գիտական մեծ ներուժ, աշխատասեր է, սրտացավ և նվիրված է իր գործին և գիտությանը: Կարևորեցին շրջանավարտների Աշխարհագրության անվճար ուսուցման կազմակերպումը: Նրանք բարձր գնահատեցին ամբիոնում կատարված մեծածավալ աշխատանքը և առաջարկեցին ընդունել այն և գնահատել բավարար:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Վ.Գրիգորյանի հաշվետվությունն ընդունել և ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-35, ՁԵՌՆՊԱՀ -0, ԴԵՄ-0

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց. Վ.Վ.Գրիգորյանի ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

5.1 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Սերվիս ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Հասմիկ Ռաֆիկի Սայադյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Հ.Սայադյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Հ.Ռ.Սայադյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խարհրդին այն դնել քննարկման:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ – դոց.դոց.Ս.Ռ.Սուվարյանը, Մ.Ա.Գրիգորյանը: Նրանք բարձր գնահատելով Հ.Սայադյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (զադտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Շ.Վ.Խաչատրյան, անդամներ՝ դոց.դոց.Ս.Ա.Ներսեսյան և Տ.Ա.Սարգսյան:

ԼՄԵՑԻՆ – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից քվեարկության մասնակցել են 35-ը: Հասմիկ Սայադյանին դոցենտի կոչում շնորհելու համար կոդն են քվեարկել 33-ը, դեմ՝ 1, անվավեր՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և Հասմիկ Ռաֆիկի Սայադյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

5.2 ԼՄԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի ասիստենտ, երկրաբանական գիտությունների թեկնածու Վահան Մհերի Մանուկյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Վ.Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Վ.Մանուկյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին այն դնել քննարկման:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ – դոց.դոց.Շ.Վ.Խաչատրյանը, Ս.Ա.Գրիգորյանը: Նրանք բարձր գնահատելով Վ.Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Շ.Վ.Խաչատրյան, անդամներ՝ դոց.դոց.Ս.Ա.Ներսեսյան և Տ.Ա.Սարգսյան:

ՀՄԵՑԻՆ – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից քվեարկության մասնակցել են 35-ը: Վահան Մանուկյանին դոցենտի կոչում շնորհելու համար կոդն են քվեարկել 34-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և Վահան Մհերի Մանուկյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

6 ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

6.1 ՀՄԵՑԻՆ. Սերվիս ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Մարտիրոսի Աբգարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Նարինե Մարտիրոսի Աբգարյանի ատենախոսական թեման հաստատել «Փորձառական զբոսաշրջության ներդրումը ՀՀ-ում» վերնագրով, իսկ գիտական ղեկավար նշանակել ամբիոնի պրոֆեսոր ա.գ.դ. Ա.Ա.Ավագյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սերվիս ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Մարտիրոսի Աբգարյանի ատենախոսական թեման հաստատել «Փորձառական զբոսաշրջության ներդրումը ՀՀ-ում» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ. Ա.Ա.Ավագյանին:

6.2 ՀՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց., մանկ.գ.թ. Վ.Վ.Գրիգորյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Նարեկ Ապրեսի Սահակյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Նարեկ Ապրեսի Սահակյանի ատենախոսական թեման հաստատել «Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման և տարածքային կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, իսկ գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, մանկ.գ.թ. Վ.Վ.Գրիգորյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նարեկ Ապրեսի Սահակյանի ատենախոսական թեման հաստատել «Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման և տարածքային կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, մանկ.գ.թ. Վ.Վ.Գրիգորյանին:

6.3 ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Անուշ Գարիկի Համբարձումյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Անուշ Գարիկի Համբարձումյանի ատենախոսական թեման հաստատել «Գյուղատնտեսության մասնագիտացման և տարածքային կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, իսկ գիտական ղեկավար նշանակել Սերվիս ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ. Ա.Ա.Ավագյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Անուշ Գարիկի Համբարձումյանի ատենախոսական թեման հաստատել «Գյուղատնտեսության մասնագիտացման և տարածքային կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել Սերվիս ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.դ. Ա.Ա.Ավագյանին:

6.4 ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Արթուր Գրիշայի Աբրահամյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Արթուր Գրիշայի Աբրահամյանի ատենախոսական թեման հաստատել «Արցախի Հանրապետության ժողովրդաաշխարհագրական իրավիճակի արդի հիմնախնդիրները» վերնագրով, իսկ գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Ա.Հ.Պոտոսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արթուր Գրիշայի Աբրահամյանի ատենախոսական թեման հաստատել «Արցախի Հանրապետության ժողովրդաաշխարհագրական իրավիճակի արդի հիմնախնդիրները» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Ա.Հ.Պոտոսյանին:

6.5 ՀՄԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ պրոֆեսոր, ե.գ.դ. Ս.Հ.Հայրոյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Հարություն Սոսի Երեմյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Հարություն Սոսի Երեմյանի ատենախոսական թեման հաստատել «Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների հնարավոր փոփոխությունների գնահատումը պայմանավորված տեխնածին գործոններով» վերնագրով, իսկ գիտական ղեկավար նշանակել Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Վ.Պ.Վարդանյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հարություն Սոսի Երեմյանի ատենախոսական թեման հաստատել «Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների հնարավոր փոփոխությունների գնահատումը պայմանավորված տեխնածին գործոններով» վերնագրով, գիտական ղեկավար նշանակել Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Վ.Պ.Վարդանյանին:

6.6 ՀՄԵՑԻՆ. Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմայով նախագծի հաստատման վերաբերյալ: Թ.Վարդանյանը հակիրճ ներկայացրեց ծրագրի նպատակը և դրված խնդիրները:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դոց. Մ.Ա.Գրիգորյանը, ով ողջունեց թեմատիկ ֆինանսավորման մրցույթին մասնակցելու փաստը և կոչ արեց ամբիոնի վարիչներին նույնպես օգտագործել ամբիոնների պոտենցիալը:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Սևանա լճի և նրա ավազանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման համապարփակ պլանի մշակում» թեմայով նախագիծը երաշխավորել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Գիտության Կոմիտե:

6.7 ԼՍԵՑԻՆ. Վ.Գ.Մարգարյանի հաղորդումը «Սևանա լիճ թափվող գետերի ձմեռային սակավաջուր շրջանի ջրի ծախսի բնութագրերի ջրակոլոգիական գնահատում» թեմայով նախագծի հաստատման վերաբերյալ: Վ.Մարգարյանը հակիրճ ներկայացրեց ծրագրի նպատակը և դրված խնդիրները:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դոց. Մ.Ա.Գրիգորյանը, ով ողջունեց թեմատիկ ֆինանսավորման մրցույթին մասնակցելու փաստը և կոչ արեց ամբիոնի վարիչներին նույնպես օգտագործել ամբիոնների պոտենցիալը:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Սևանա լիճ թափվող գետերի ձմեռային սակավաջուր շրջանի ջրի ծախսի բնութագրերի ջրակոլոգիական գնահատում» թեմայով նախագիծը երաշխավորել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Գիտության Կոմիտե:

6.8 ԼՍԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.Վահագն Վարազդատի Գրիգորյանի ԻԴ.03.02 «Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ հաղորդումը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Վ.Գրիգորյանի ներկայացրաց թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու պահանջներին բավարարող փաստաթղթերը՝ միջնորդել ՀՀ ԲՈԿ-ին՝ դոց.Վահագն Վարազդատի Գրիգորյանին ԻԴ.03.02. «Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք տրամադրելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան